

1.2.7.2. Կազմակերպությունների ակտիվները

Ըստ նախնական տվյալների, հանրապետության մոտ 1300 խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների շրջանառու ակտիվները 1999թ. ընթացքում աճել են 9556,5 մլն. դրամով կամ 7,4%-ով և 2000թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել՝ 138060,4 մլն. դրամ:

Տնտեսական գործունեության հիմնական ճյուղերի շրջանառու ակտիվների կազմը

մլն. դրամ

	1.01.1999թ. դրությամբ			1.01.2000թ. դրությամբ		
	Շրջանառու ակտիվներ	այդ թվում՝		Շրջանառու ակտիվներ	այդ թվում՝	
		ապրանքանյութական պաշարներ	դրամական միջոցներ		ապրանքանյութական պաշարներ	դրամական միջոցներ
Ընդամենը	128503.9	118242.8	10261.1	138060.4	127142.4	10918.0
<i>որից՝</i>						
արդյունաբերություն	99875.6	97197.5	2678.1	94961.5	91411.1	3550.4
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	77.7	82.2	26.1	68.8	71.9	32.5
էլեկտրոէներգիայի, գազի, շոգու և տաք ջրի նատակարարում	18577.5	17823.0	754.5	14907.0	14243.1	663.9
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	14.5	15.1	7.4	10.9	11.3	6.1
շինարարություն	3528.6	3251.1	277.7	5739.3	5024.3	715.0
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	2.7	2.7	2.7	4.2	4.0	6.6
տրանսպորտ	4769.3	3502.3	1267.0	4937.6	3303.6	1634.0
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	3.7	3.0	12.3	3.6	2.6	15.1
կապ	7798.6	3309.1	4489.5	7794.9	5117.9	2677.0
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	6.1	2.8	43.8	5.7	4.0	24.7

2000թ. հունվարի 1-ի դրությամբ շրջանառու ակտիվների հիմնական մասը՝ 92,1%-ը կազմել են ապրանքանյութական պաշարները, իսկ դրամական միջոցների մնացորդը կազմել է 7,9%:

Դրամական միջոցների կազմում 10,9%-ը (1185,4 մլն.դրամ) կազմել է դրամարկղի մնացորդը, իսկ ամենամեծ տեսակարար կշիռը՝ 55,8% (6086,8 մլն. դրամ) բաժին է ընկել արտարժուրթային հաշվին: